ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» ապրիլի 2015 թվական N 55-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆԻ ԹԱՂԱՄԱՍԻ 11-ՐԴ ՓՈՂՈՑԻ N 10/5 ՀԱՍՑԵԻ ԱՆԱՎԱՐՏ ՇԵՆՔԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով, որ Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Անի թաղամասի 11-րդ փողոցի N 10/5 հասցեի անավարտ շենքը (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 03042015-08-0015 վկայական) չի օգտագործվում համայնքի կարիքների համար և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Անի թաղամասի 11-րդ փողոցի N 10/5 հասցեի 297,47 (երկու հարյուր իննսունյոթ ամբողջ քառասունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով անավարտ շենքը և կառուցապատման ու սպասարկման համար զբաղեցրած 481,0 (չորս հարյուր ութսունմեկ) քառակուսի մետր մակերեսով հողամասը, օտարել աճուրդային կարգով:
2. Ելնելով <<Պ.Ա.Գ. Էսթեյթ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2015 թվականի ապրիլի 20-ի թիվ-056 հաշվետվության եզրակացությամբ գնահատված շուկայական արժեքից՝ 297,47 (երկու հարյուր իննսունյոթ ամբողջ քառասունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով անավարտ շենքը և կառուցապատման ու սպասարկման համար զբաղեցրած 481,0 (չորս հարյուր ութսունմեկ) քառակուսի մետր մակերեսով հողամասի համար օտարման մեկնարկային գին հաստատել 2.000.000 (երկու միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամը:

Կողմ (14) **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ա. Ադամյան _____

Ա. Բաղրամյան _____

Ա.Գրիգորյան _____

Վ.Եդիգարյան _____

Գ.Թաթարյան _____

Հ. Խաչատրյան _____

Հ. Կարապետյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Ն. Մեսրոպյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է. Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Ե. Պողոսյան _____

Մ. Սահակյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«30» ապրիլի 2015 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» ապրիլի 2015 թվական N 56-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՂԱՐՍԻ ԽՃՈՒՂԻ N 4/7 ՀԱՍՑԵԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով, որ Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Ղարսի խճուղի N 4/7 հասցեի շինությունները (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 15042015-08-0012 վկայական) չի օգտագործվում համայնքի կարիքների համար և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Ղարի խճուղի N 4/7 հասցեի 31,36 (երեսունմեկ ամբողջ երեսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր ընդհանուր մակերեսով շինությունները և կառուցապատման ու սպասարկման համար զբաղեցրած 2333,0 (երկու հազար երեք հարյուր երեսուներեք) քառակուսի մետր մակերեսով հողամասը, օտարել աճուրդային կարգով:
2. Ելնելով <<Պ.Ա.Գ. Էսթեյթ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2015 թվականի ապրիլի 20-ի թիվ-057 հաշվետվության եզրակացությամբ գնահատված շուկայական արժեքից՝ 31,36 (երեսունմեկ ամբողջ երեսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր ընդհանուր մակերեսով շինությունները և կառուցապատման ու սպասարկման համար զբաղեցրած 2333,0 (երկու հազար երեք հարյուր երեսուներեք) քառակուսի մետր մակերեսով հողամասի համար օտարման մեկնարկային գին հաստատել 3.280.000 (երեք միլիոն երկու հարյուր ութսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամը:

	Կողմ (14)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ(0)**
Ա. Ադամյան			
Ա. Բաղրամյան			
Ա.Գրիգորյան			
Վ.Եդիգարյան			
Գ.Թաթարյան			
Հ. Խաչատրյան			

Հ. Կարապետյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Ն. Մեսրոպյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է. Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Ե. Պողոսյան _____

Մ. Սահակյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Մ. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«30» ապրիլի 2015 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» ապրիլի 2015 թվական N 57-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՂՈՒԿԱՍՅԱՆ ՓՈՂՈՑ N 126 ՀԱՍՑԵԻ ՇԵՆՔԸ ԲՆԱԿՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով և ընդառաջելով Ղուկասյան փողոց N 126 հասցեի շենքում բնակություն հաստատած անօթևան բնակիչների խնդրանքին՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական N 2420945) Ղուկասյան փողոց N 126 հասցեի հասարակական շենքը բնակվելու նպատակով անհատույց օգտագործման տրամադրել նշված շենքում բնակություն հաստատած թվով 9 (ինը) ընտանիքներին՝ համաձայն հավելվածի:
2. Սահմանել, որ՝
   1) բնակվելու նպատակով անհատույց օգտագործման իրավունքով ամեն մի ընտանիքին հատկացվող տարածքի մակերեսը որոշվելու է ընտանիքի անդամների քանակին և կազմին համապատասխան՝ ելնելով նորմատիվ պահանջներից,
   2) շենքի օգտագործման, պահպանման, սպասարկման, վերանորոգման և այլ պայմանների հետ կապված պարտավորություններն ու պահանջները մանրամասնել համապատասխան պայմանագրերով:
3. Բնակվելու նպատակով անհատույց օգտագործման իրավունք ստացած անօթևան ընտանիքներին հանել պետական միջոցներով կառուցվող բնակարաններ ստացողների հերթացուցակից:

	Կողմ (14)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ(0)**
Ա. Ադամյան			
Ա. Բաղրամյան			
Ա.Գրիգորյան			
Վ.Եդիգարյան			
Գ.Թաթարյան			

Հ. Խաչատրյան _____

Հ. Կարապետյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Ն. Մեսրոպյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է. Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Ե. Պողոսյան _____

Մ. Սահակյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«30» ապրիլի 2015 թ.

ՀԱՎԵԼՎԱԾ
Գյումրի համայնքի ավագանու
2015թվականի ապրիլի 30-ի
N 57-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

Ղուկասյան փողոց N 126 հասցեի շենքում բնակություն հաստատած, բնակվելու իրավունքով անհատույց օգտագործման տարածք տարմադրվող ընտանիքների

Հ/Հ	Ա.Ա.Հ.	Ընտանիքի անձերի քանակը	Հաշվառման հասցեն
1.	Պետրոսյան Լենա Տիգրանի	8	ք. Գյումրի Ղուկասյան 126 շենք, բն. 1
2.	Հարությունյան Նարինե Մարտինի	4	ք. Գյումրի Ղուկասյան 126 շենք, բն. 2
3.	Կարապետյան Անահիտ Քերոբի	3	ք. Գյումրի Ղուկասյան 126 շենք, բն. 3
4.	Ստեփանյան Մարինե Սեյրանի	3	ք. Գյումրի Ղուկասյան 126 շենք, բն. 4
5.	Առաքելյան Նարինե Գրիգորի	2	ք. Գյումրի Ղուկասյան 126 շենք, բն. 5
6.	Գևորգյան Լենա Եղիազարի	1	ք. Գյումրի Ղուկասյան 126 շենք, բն. 6
7.	Խաչատրյան Ալվինա Ռաֆիկի	2	ք. Գյումրի Ղուկասյան 126 շենք, բն. 7
8.	Հովակիմյան Հասմիկ Խաչիկի	4	ք. Գյումրի Ղուկասյան 126 շենք, բն. 8
9.	Ամիրխանյան Մարինե Մուշեղի	3	ք. Գյումրի Երկ/գծի 17շ., բն. 9

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ **Ա. ՀԱԿՈԲՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«30» ապրիլի 2015 թվական N 58-Ն

ՄՐՑՈՒՅԹՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 74-րդ հոդվածի դրույթներով, 81-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի մարտի 3-ի <<Գյումրի քաղաքի գլխավոր հատակագիծը և Շիրակի մարզի տարածքային հատակագծման ուրվագիծը հաստատելու մասին>> N 295-Ն որոշումը և Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի կողմից ներկայացված հողամասերի ելակետային տվյալները՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Տալ համաձայնություն Գյումրի համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, կառուցապատման նպատակով առանձնացված հողամասերը մրցույթով կառուցապատման իրավունքով տրամադրելուն և հաստատել հողամասերի վարձավճարների մեկնարկային չափերը՝ համաձայն հավելվածի:

Կողմ (14) **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ա. Ադամյան _____

Ա. Բաղրամյան _____

Ա.Գրիգորյան _____

Վ.Եդիգարյան _____

Գ.Թաթարյան _____

Հ. Խաչատրյան _____

Հ. Կարապետյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Ն. Մեսրոպյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է. Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Ե. Պողոսյան _____

Մ. Սահակյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«30» ապրիլի 2015 թ.

Հավելված՝
Գյումրի համայնքի ավագանու
2015թվականի ապրիլի 30-ի
N 58-Ա որոշման

Մրցույթով կառուցապատման իրավունքով տրամադրվող հողամասերի վարձավճարի մեկնարկային չափը

N	Հողամասի հասցեն (գտնվելու վայրը) տարածագնահատման գոտին	Ծածկագիրը մակերեսը /քառ.մ/	Հողամասի նպատակային և գործառական նշանակությունը	Հողամասի օգտագործման նպատակը	Տարեկան վարձավճարի մեկնարկային չափը /դրամ/	Ժամկետը /տարի/
1	Լալայան փող. N 30/8 X գոտի	Մ 15-02 849,14	Բնակավայրերի ընդհանուր օգտագործման	Բարեկարգում, կանաչապատում	70000	5
2	Շչերբինայի փող. N 29/3 IX գոտի	Մ 15-03 39,5	Բնակավայրերի այլ հողեր	Հասարակական կառուցապատում	20000	30
3	Վազգեն Սարգսյան փող. N 19/9 X գոտի	Մ15-04 300,0	Բնակավայրերի այլ հողեր	Հասարակական կառուցապատում	150000	30

Քաղաքաշինության և
ճարտարապետության բաժնի պետ՝ Ա. Հակոբյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» ապրիլի 2015 թվական N 59-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՕՂԱԿԱՅԻՆ ՓՈՂՈՑ N 63/1 ՀԱՍՑԵԻ ԱՎՏՈՏՆԱԿՆԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով, որ Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Օղակային փողոց N 63/1 հասցեի ավտոտնակները (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 09102014-08-0005 վկայական) չեն օգտագործվում համայնքի կարիքների համար և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Օղակային փողոց N 63/1 հասցեի 216,32 (երկու հարյուր տասնվեց ամբողջ երեսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով ավտոտնակները և կառուցապատման ու սպասարկման համար զբաղեցրած 248,12 (երկու հարյուր քառասունութ ամբողջ տասներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը, օտարել աճուրդային կարգով:
2. Ելնելով <<Պ.Ա.Գ. Էսթեյթ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2015 թվականի հունվարի 22-ի թիվ-008 հաշվետվության եզրակացությամբ գնահատված շուկայական արժեքից՝ 216,32 (երկու հարյուր տասնվեց ամբողջ երեսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով ավտոտնակների և կառուցապատման ու սպասարկման համար զբաղեցրած 248,12 (երկու հարյուր քառասունութ ամբողջ տասներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի համար օտարման մեկնարկային գին հաստատել 960.000 (ինն հարյուր վաթսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամը:

	Կողմ (14)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ(0)**
Ա. Ադամյան			
Ա. Բաղրամյան			
Ա.Գրիգորյան			
Վ.Եդիգարյան			
Գ.Թաթարյան			

Հ. Խաչատրյան _____

Հ. Կարապետյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Ն. Մեսրոպյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է. Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Ե. Պողոսյան _____

Մ. Սահակյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«30» ապրիլի 2015 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«30» ապրիլի 2015 թվական N 60-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-Ի NN 139-Ա, 140-Ն, 149-Ա, 151-Ա, 160-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 3-րդ մասով, 5-րդ մասի 1-ին պարբերությամբ՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Գյումրի համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 14-ի թվով 5 (հինգ) որոշումներում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.
   1) «Գյումրի համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 14-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին» N 139-Ա որոշման հավելվածի 2-րդ կետում և «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի N 161-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 140-Ն որոշման վերնագրում «համայնքի» բառից հետո ավելացնել «ավագանու» բառը,
   2) «Տարեմուտի կապակցությամբ դրամական օգնություն հատկացնելու մասին» N 149-Ա որոշման 1-ին կետի 4-րդ ենթակետում «երկու միլիոն երեսունինը» բառերը փոխարինել «երկու միլիոն երեք հարյուր իննսուն» բառերով,
   3) «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի կողմից 2014 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմված հողային հաշվեկշռին համաձայնություն տալու մասին» որոշման 1-ին կետում «հունիսի» բառը փոխարինել «հուլիսի» բառով,
   4) «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղարսի խճուղի N 6/3 հասցեում գտնվող անշարժ գույքը և հողամասը մրցույթով վարձակալության տրամադրելու և վարձավճարի չափ սահմանելու մասին» որոշման 1-ին «վարձակալություն» բառից հետո ավելացնել «50 (հիսուն) տարի ժամկետով» թիվը և բառերը:

Կողմ (14) **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ա. Ադամյան _____

Ա. Բաղրամյան _____

Ա.Գրիգորյան _____

Վ.Եդիգարյան _____

Գ.Թաթարյան _____

Հ. Խաչատրյան _____

Հ. Կարապետյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Ն. Մեսրոպյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է. Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Ե. Պողոսյան _____

Մ. Սահակյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«30» ապրիլի 2015 թ.